ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Համաձայնագիր	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.12.27/2(39)	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	15.11.2016
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	15.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13.10.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՄՔՄՄԿ) ՄԻՋԵՎ ՀՀ-ՈՒՄ ՄՔՄՄԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ՄՔՄՄԿ) ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՔՄՄԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն)՝ մի կողմից, և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (այսուհետ՝ ՄՔՄՄԿ)՝ մյուս կողմից (երկուսն այսուհետ՝ Կողմեր),

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և ՄՔՄՄԿ միջև երկարատև համագործակցությունը, որը հաստատվել է միգրացիոն կառավարման նկատմամբ համապարփակ մոտեցման մաս կազմող հարցերի կարգավորմանն ուղղված նախաձեռնությունների համատեղ իրականացման միջոցով,

նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իրականացնել հետևողական ազգային միգրացիոն քաղաքականություն՝ ներառյալ երկարաժամկետ լուծումներ գտնելը, մի կողմից, օտարերկրյա պետություններում բնակվող Հայաստանի քաղաքացիների համար, և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող միգրանտների և փախստականների համար,

նկատի ունենալով, որ ՄՔՄՄԿ-ը մասնագիտացած միջազգային կազմակերպություն է, որն իրավասու է գործընկեր կառավարությունների և կազմակերպությունների հետ համատեղ խթանել միգրացիայի համապարփակ, կայուն և ապագային միտված կառավարումը,

ձգտելով էլ ավելի ամրապնդել Կողմերի միջև բարեկամական կապերը և պաշտոնական կարգավիճակ տալ միգրացիայի կառավարման ոլորտում համագործակցությանը՝ գործընկերության և փոխադարձ վստահության ոգով,

հիմք ընդունելով 1993 թ. ՄՔՄՄԿ ստեղծման մասին համաձայնագիրը՝ 1996թ. մարտի 27-ի, 1996 թ. ապրիլի 26-ի, 2003 թ. հունիսի 25-ի և 2014 թ. մայիսի 26-ի փոփոխություններով, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին կոնվենցիան,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակն է սահմանել ՄՔՄՄԿ և նրա անձնակազմի կարգավիճակը, արտոնություններն ու անձեռնմխելիությունները Հայաստանի Հանրապետությունում:
2. ՄՔՄՄԿ-ն իրավունք ունի հիմնելու իր ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում և աշխատանքի

ընդունելու իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ՝ տեղական և միջազգային անձնակազմ:

ՀՈԴՎԱԾ 2
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է ՄՔՄՄԿ միջազգային իրավաբանական անձի կարգավիճակը և իրավունակությունը Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես՝

ա) պայմանագրեր կնքելու,

բ) շարժական ու անշարժ գույք ձեռք բերելու, տիրապետելու և տնօրինելու, և

գ) դատական հայց ներկայացնելու և որպես պատասխանող հանդես գալու:

ՀՈԴՎԱԾ 3
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՇԵՆՔԵՐԸ

1. Ներկայացուցչությանը պատկանող կամ նրա կողմից օգտագործվող շենքերը, արխիվը և բոլոր փաստաթղթերն ու նյութերն անձեռնմխելի են:

2. Հայաստանի Հանրապետության պետական հատուկ ծառայությունների աշխատակցի կամ պաշտոնյայի կամ ցանկացած հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձի՝ ներկայացուցչություն մուտք գործելու համար պահանջվում է ներկայացուցչության ղեկավարի թույլտվությունը: Այնուամենայնիվ, համարվում է, որ այդ թույլտվությունը պետք է տրվի հրատապ պաշտպանական գործողություններ պահանջող արտակարգ իրավիճակների դեպքում:

3. Հայաստանի իրավասու մարմինները պատշաճ կերպով ապահովում են, որ ներկայացուցչության անդորրը չխախտվի որևէ անձի կամ անձանց խմբի կողմից, որոնք կփորձեն չարտոնված կերպով մուտք գործել ներկայացուցչության շենքեր:

4. Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ներկայացուցչությանը տրամադրվեն անհրաժեշտ կոմունալ ծառայություններ:

5. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է, որ ներկայացուցչությունը կարողանա, առանց գրաքննության կամ այլ միջամտության, ուղարկել և ստանալ իր գործունեության հետ կապված հաղորդագրություններ:

6. Եթե սույն Համաձայնագրում այլ բան նախատեսված չէ, բացառապես ՄՔՄՄԿ-ի՝ որպես միջազգային կազմակերպության համար կանոններ ու կանոնակարգեր մշակելու ՄՔՄՄԿ-ի իրավունքով պայմանավորված, ներկայացուցչության ներսում կկիրառվեն Հայաստանի Հանրապետության օրենքները:

ՀՈԴՎԱԾ 4
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1. Ներկայացուցչությունն անձեռնմխելիություն կունենա դատական գործընթացներից և հարկադիր կատարման միջոցներից՝ բացառությամբ.

ա) այն առանձնահատուկ դեպքերի, երբ ներկայացուցչությունը հստակ կերպով հրաժարվել է այդ անձեռնմխելիությունից,

բ) երրորդ կողմի քաղաքացիական հայցի դեպքում, որը հարուցվել է ներկայացուցչությանը պատկանող կամ ներկայացուցչության անունից շահագործվող շարժիչային փոխադրամիջոցով վթարի հետևանքով առաջացած վնասի առնչությամբ կամ շարժիչային փոխադրամիջոցների պահպանումը, շահագործումն ու օգտագործումը կարգավորող կանոնակարգերի խախտման առնչությամբ,

գ) ներկայացուցչության կողմից իր անձնակազմին չվճարված աշխատավարձերի, վարձատրությունների կամ փոխհատուցումների առգրավման դեպքում՝ դատական իշխանությունների որոշման համաձայն:

2. Ներկայացուցչության գույքը և ակտիվներն անձեռնմխելի են և ենթակա չեն վարչական և ժամանակավոր դատական սահմանափակումների:

3. Չազդելով 1-ին և 2-րդ պարբերությունների վրա՝ ներկայացուցչության գույքը և ակտիվները, անկախ դրանց գտնվելու վայրից, անձեռնմխելի են և ենթակա չեն որևէ տեսակի առգրավման, բռնագրավման, սեփականազրկման և կալանքի:

ՀՈԴՎԱԾ 5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանափակված չլինելով ֆինանսական վերահսկողությամբ, կանոնակարգերով կամ որևէ տեսակի մորաթորիումով՝ ներկայացուցչությունը կարող է.

ա) բացել և վարել ցանկացած արժույթով բանկային հաշիվ,

բ) թույլատրելի ուղիներով գնել և ստանալ, պահել և տնօրինել ցանկացած արժույթ կամ արժեթուղթ, և

գ) փոխանցել իր միջոցները, ավանդները կամ արժույթը մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում և փոխարկել իր

մոտ եղած արժույթը ցանկացած այլ արժույթի:

ՀՈԴՎԱԾ 6
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԵՎ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻՑ ԱԶԱՏՈՒՄ

1. Ներկայացուցչության գույքը, տարածքները, եկամուտները և այլ ակտիվներն ազատվում են հարկման բոլոր տեսակներից:

2. Ներկայացուցչությանը մատակարարվող ապրանքների և ծառայությունների գներում ներառված անուղղակի հարկերի, ինչպես նաև վարձակալության և լիզինգի հետ կապված վճարների նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

3. Ներկայացուցչության կողմից ներմուծված կամ արտահանված՝ պաշտոնական գործունեության համար անհրաժեշտ ապրանքները, ներառյալ շարժիչային փոխադրամիջոցները և նրանց պահեստամասերը, ազատվում են մաքսատուրքերից և այլ վճարներից՝ պայմանով, որ այդ վճարները պահպանման, տեղափոխման և այդ բնույթի ծառայությունների դիմաց գանձվող վճարներ չեն, ինչպես նաև՝ ներմուծման և արտահանման վրա տարածվող տնտեսական արգելքներից և սահմանափակումներից:

4. 3-րդ պարբերությանը համապատասխան ներմուծված ապրանքները ներկայացուցչության կողմից չեն կարող Հայաստանի Հանրապետությունում օտարվել կամ փոխանցվել երրորդ կողմի դրանց ներմուծման կամ ձեռք բերման օրվանից երեք տարվա ընթացքում:

5. Հայաստանի Հանրապետությունը ներկայացուցչության յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար տրամադրում է դիվանագիտական համարանիշ, որով այն կտարբերակվի՝ որպես միջազգային կազմակերպության պաշտոնական փոխադրամիջոց:

ՀՈԴՎԱԾ 7
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

1. ՄՔՄՄԿ-ն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հաղորդում է ներկայացուցչության պաշտոնատար անձանց և անձնակազմի այլ անդամների անուններն ու գործառույթները:

2. Հայաստանի Հանրապետությունը, համաձայն իր ներպետական օրենսդրության, ներկայացուցչության անձնակազմին և անձնակազմի անդամների հետ համատեղ բնակվող նրանց ընտանիքների անդամներին տրամադրում է նույնականացման քարտեր՝ քարտատիրոջ լուսանկարով: Այս քարտը Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների հետ առնչվելիս կծառայի որպես քարտատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ 8
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության առնչությամբ ներկայացուցչության անձնակազմն օգտվում է հետևյալ արտոնություններից և անձեռնմխելիությունից.

ա) անձեռնմխելիություն դատական գործընթացներից՝ պաշտոնյայի կարգավիճակում արտահայտած գրավոր կամ բանավոր խոսքերի և կատարած բոլոր գործողությունների համար,

բ) անձեռնմխելիություն անձնական և պաշտոնական ուղեբեռի առգրավումից և անձեռնմխելիություն պաշտոնական ուղեբեռի զննումից,

գ) պաշտոնական բոլոր փաստաթղթերի, տվյալների և այլ նյութերի անձեռնմխելիություն,

դ) հարկերից ազատում ՄՔՄՄԿ-ում ծառայության առնչությամբ վճարվող աշխատավարձերի, վարձատրությունների, վճարումների նկատմամբ՝ ներառյալ նպաստները, վարձավճարները, փոխհատուցումներն ու թոշակները: Այս ազատումը տարածվում է նաև ներկայացուցչության անձնակազմի անդամների ընտանիքներին տրամադրվող օժանդակության վրա,

ե) ազատում ներգաղթային սահմանափակումներից և գրանցման ձևակերպումներից իրենց և իրենց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների համար,

զ) առանց մաքսի վճարման՝ անձնական օգտագործման իրերի և մեկ ավտոմեքենայի ներմուծման իրավունք,

է) իրենց և իրենց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների պաշտպանության և հայրենիք վերադառնալու նույն հնարավորությունները, որոնք միջազգային ճգնաժամերի ժամանակ տրամադրվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների անձնակազմին:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության «դ»-«է» կետերը չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 9
ՄՔՄՄԿ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

1. Փորձագետներն օգտվում են սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա»-«գ» կետերով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից, ինչպես նաև իրենց վարձատրությունների և ծախսերի փոխանցման համար արժույթի փոխարկման հնարավորություններից:

2. Փորձագետների համար պահանջվող մուտքի արտոնագրերը տրամադրվում են հնարավորինս սեղմ ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 10
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն Համաձայնագրով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունը նպատակ չունեն ներկայացուցչության անձնակազմին կամ փորձագետներին անձնական առավելություններ շնորհելու: Դրանք շնորհվում են՝ բացառապես ապահովելու համար, որ ներկայացուցչությունը կարողանա ցանկացած ժամանակ անարգել իրականացնել իր պաշտոնական գործունեությունը, և այն անձինք, որոնց շնորհվել են այդ արտոնությունները, ունենան լիարժեք անկախություն:

2. ՄՔՄՄԿ-ն կհրաժարվի անձեռնմխելիությունից, եթե գտնի, որ այդ անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության պատշաճ իրականացումը, և որ դրանից կարելի է հրաժարվել՝ առանց ՄՔՄՄԿ շահերը վնասելու:

ՀՈԴՎԱԾ 11
ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Կողմերը ջանքեր կգործադրեն բարեկամաբար կարգավորելու համար սույն Համաձայնագրից բխող կամ դրան վերաբերող ցանկացած վեճ, տարաձայնություն կամ բողոք:

ՀՈԴՎԱԾ 12
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Այդ նպատակով, Կողմերից որևէ մեկի խնդրանքով, ցանկացած ժամանակ բանակցություններ են անցկացվում: Այդ փոփոխություններն ու լրացումները կկատարվեն առանձին համաձայնագրի ձևով, որը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում այնպես, ինչպես սույն Համաձայնագիրը:

ՀՈԴՎԱԾ 13
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով Հայաստանի Հանրապետության կողմից ՄՔՄՄԿ-ին գրավոր ծանուցելու օրը:

ՀՈԴՎԱԾ 14
ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով: Դադարեցումն ուժի մեջ է մտնում հարյուր ութսուն (180) օր ժամանակահատվածից հետո՝ սկսած դադարեցման մասին գրավոր ծանուցումը մյուս Կողմի ստանալու ամսվան հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալ ներկայացուցիչները, լինելով այդ նպատակով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 15-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության տարբերությունների դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. հոկտեմբերի 13-ին